**Հարց** Ինչպե՞ս է հաշվարկվում էլեկտրական էներգիա արտադրող կայանների հասույթը:

**Պատասխան** Անհրաժեշտ հասույթը (ԱՀ) հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

ԱՀ = ԹԾ + Մ + ԹՇ

որտեղ՝ ԹԾ - թույլատրելի տարեկան ծախսերն են՝

- շահագործման և պահպանման ծախսերը,
- հարկերը (բացի շահութահարկից և ավելացված արժեքի հարկից) և Արցախի Հանրապետության օրենքներով սահմանված տուրքերն ու պարտադիր այլ վճարները,
- Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հիմնավորված և անհրաժեշտ այլ ծախսեր:

Մ - հիմնական միջոցների տարեկան մաշվածությունն է,

ԹՇ - թույլատրելի շահույթն է: